ՆՇԱԹԵՐԹ
պետական գրանցման
մասին տեղեկությունների

«ԱՐԱՐԱՏ ՌԱՔԵԹ ՍՊՈՐՏՍ ՅՈՒՆԱՅԹԵԴ» ՄԱՐԶԱԿԱՆ Հասարակական կազմակերպություն

Գրանցված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

Գրանցված է՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն

Աշխատակից՝ Դիանա Քոչարյան Սպասարկման գրասենյակի գործ. իրականացնող «ՈՒԲՍ» ՍՊԸ

Գրանցման ամսաթիվ՝ 05.11.2026
Գրանցման համար՝ 211.171.1624643
ՀՎՀՀ՝ 08339721

Պետական գրանցման մասին տեղեկությունների նշաթերթը էլեկտրոնային եղանակով ձևավորված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի կողմից և հանդիսանում է **«ԱՐԱՐԱՏ ՌԱՔԵԹ ՍՊՈՐՏՍ ՅՈՒՆԱՅԹԵԴ» ՄԱՐԶԱԿԱՆ Հասարակական կազմակերպություն** կանոնադրության անբաժանելի մասը։

Սույն կանոնադրության գրանցումը հավաստվում է համակարգի կողմից գեներացված RBCF-7C6D-4F3D-6327 ծածկագրով քաղվածքով, որի իսկությունը և արդիականությունը կարող է ստուգվել փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգում (e-verify.am)։

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՐԱՐԱՏ ՌԱՔԵԹ ՍՊՈՐՏ ՅՈՒՆԱՅԹԵԴ»
ՄԱՐԶԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

16 հոկտեմբերի 2026թ.-ի
հիմնադիր ժողովի թիվ 1 արձանագրությամբ

Նախագահ՝

Հովհաննես Իսպիրյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«____»_____ 202 թ.

Գրանցման համար

_____

Հարկ վճարողի հաշվառման համար

_____

աշխատակից

_____/_____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱՐԱՏ ՌԱՔԵԹ ՍՊՈՐՏ ՅՈՒՆԱՅԹԵԴ»

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2026թ.

Ստորագրող
ԴԻԱՆԱ ՔՈՉԱՐՅԱՆ
79109604441

2026-11-02 15:59:19 GMT+04:00

Էջ 1 ընդհանուր 13-ից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 3
III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ 4
IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5
V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 6
VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 10
VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 11
VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ 12
IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 13

Էջ 2 ընդհանուր 13-ից

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Արարատ Ռաքեթ Սպորտս Յունայթեդ» Մարզական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:
2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:
3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
4. Կազմակերպության անվանումն է՝
   4.1 հայերեն՝ «Արարատ Ռաքեթ Սպորտս Յունայթեդ» Մարզական հասարակական կազմակերպություն,
   4.2 անգլերեն՝ "Ararat Racket Sports United" Sport Public Organization,
   4.3 Կազմակերպության կրճատ անվանումն է՝ հայերեն՝ «ԱՌՍՅ», անգլերեն՝ «ARSU»:
5. Կազմակերպության գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան, 26, բն. 5

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝
   6.1 Հայաստանի Հանրապետությունում սքվոշի, ինչպես նաև ռակետային այլ մարզաձևերի (բադմինթոն, փադել, փիքլբոլ, թենիս, սեղանի թենիս և այլն) հանրահռչակումը, մասսայականացումն ու զարգացումը՝ սքվոշը դիտարկելով որպես Կազմակերպության առաջնահերթ մարզաձև,
   6.2 սքվոշի և ռակետային այլ մարզաձևերի մրցաշարերի, մրցումների, և լիգաների կազմակերպումն ու անցկացումը Հայաստանի Հանրապետությունում և միջազգային մակարդակով,
   6.3 մարզիկների մասնակցության ապահովումը և աջակցությունը միջազգային մրցաշարերին ու մրցումներին, ինչպես նաև Կազմակերպությունը ներկայացնող մարզիկների պատրաստումը,
   6.4 մարզիչների, դատավորների և այլ մասնագետների պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումը, ուսումնական դասընթացների, սեմինարների, վարպետության դասերի և մարզական ճամբարների կազմակերպումը,
   6.5 երեխաների և պատանիների ներգրավումը ռակետային մարզաձևերում, մանկապատանեկան մարզական ծրագրերի մշակումը և իրականացումը,
   6.6 սքվոշի և ռակետային այլ մարզաձևերի զարգացման նպատակով համապատասխան մասնագետների, մարզիչների և մարզիկների ներգրավումը,
   6.7 համագործակցությունը Հայաստանի սքվոշի ազգային ֆեդերացիայի, ինչպես նաև սքվոշի և ռակետային այլ մարզաձևերի միջազգային

Էջ 3 ընդհանուր 13-ից

ֆեդերացիաների, օտարերկրյա ակումբների և կազմակերպությունների հետ,

6.8 աշխարհասփյուռ հայ մարզիկների և ռակետային մարզաձևերի սիրողների միավորումը և նրանց միջև կապերի ամրապնդումը,

6.9 Անդամների միջև մասնագիտական գիտելիքների, հմտությունների և փորձի փոխանակման խթանում և ընդլայնում,

6.10 Կազմակերպության կանոնադրական նպատակների իրագործմանն ուղղված՝ օրենքով չարգելված այլ գործունեության իրականացում:

7. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

8. Իր կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար Կազմակերպությունն օգտագործում է հետևյալ միջոցները՝ մրցաշարերի, մրցումների և լիգաների կազմակերպում և անցկացում, մարզական ճամբարների և ուսումնամարզական հավաքների անցկացում, դատավորների և մարզիչների որակավորման դասընթացների կազմակերպում, կանոնավոր հանդիպումների, մարզումների, ուսումնական դասընթացների, վերապատրաստումների, գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և անցկացում, տեղեկատվական և մասնագիտական նյութերի հրապարակում՝ տպագիր և էլեկտրոնային եղանակներով (ներառյալ տեղեկագրեր, գրքեր, պաշտոնական կայքեր, սոցիալական ցանցեր և այլ տեղեկատվական հարթակներ), ինչպես նաև մրցանակների, պատվոգրերի և խրախուսական այլ միջոցների շնորհում: Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Կազմակերպության անդամ կարող է դառնալ ցանկացած ֆիզիկական անձ, ով ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը, ինչպես նաև ցանկացած իրավաբանական անձ՝ իր իրավասու մարմնի որոշման հիման վրա:

10. Կազմակերպությունն ունի անդամների հետևյալ տեսակները՝

10.1 գործող անդամ՝ 18 տարին լրացած ֆիզիկական անձ, որը վճարել է գործող անդամի անդամավճարը,

10.2 ասոցացված անդամ՝ 18 տարին լրացած ֆիզիկական անձ, որը վճարել է ասոցացված անդամի անդամավճարը և մասնակցում է Կազմակերպության միջոցառումներին,

10.3 երիտասարդ անդամ՝ մինչև 18 տարեկան ֆիզիկական անձ,

10.4 կոլեկտիվ անդամ՝ իրավաբանական անձ, որը Ժողովում ներկայացվում է իր լիազորած մեկ ներկայացուցչի միջոցով,

Էջ 4 ընդհանուր 13-ից

10.5 պատվավոր անդամ՝ ռակետային մարզաձևերի զարգացման գործում ներդրում ունեցող անձ, որն ազատվում է անդամավճարից:

11. Ժողովում քվեարկելու, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմիններում ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն բացառապես գործող անդամները: Անդամների մյուս տեսակները (ասոցացված, երիտասարդ, կոլեկտիվ և պատվավոր անդամները) այդ իրավունքը չունեն:

12. Մինչև 14 տարեկան անձն անդամագրվում է իր օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա, իսկ 14-ից 18 տարեկան անձը՝ իր դիմումով և օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Երիտասարդ անդամը չունի Ժողովում քվեարկելու իրավունք և չի ընտրվում Կազմակերպության կառավարման մարմիններում, սակայն ունի սույն կանոնադրությամբ նախատեսված մնացած բոլոր իրավունքները: Երիտասարդ անդամը 18 տարին լրանալուց հետո անդամավճարը վճարելու դեպքում կարող է ձեռք բերել գործող անդամի կարգավիճակ:

13. Անդամավճարի չափը՝ առանձին յուրաքանչյուր տեսակի անդամի համար, ինչպես նաև անդամավճարի վճարման կարգը և ժամկետները սահմանում է Խորհուրդը:

14. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է ներկայացնում Կազմակերպության Խորհրդին՝ նշելով անդամության հայցվող տեսակը:

15. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Խորհուրդը՝ դիմումը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում՝ սույն Կանոնադրության հիման վրա:

16. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Խորհրդին: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Խորհրդի որոշմամբ:

17. Անդամին անդամությունից հեռացնելու հարցը քննարկելուց առնվազն 7 օր առաջ նրան գրավոր ծանուցվում է հեռացման հիմքի, քննարկման ժամանակի և վայրի մասին, և նրան տրվում է բացատրություն ներկայացնելու հնարավորություն: Խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել Ժողովին, իսկ Ժողովի որոշումը՝ դատական կարգով:

18. Կազմակերպության անդամը պարտավոր է պահպանել կանոնադրության պահանջները, կատարել կառավարման մարմինների որոշումները, սահմանված կարգով և ժամկետներում վճարել անդամավճարը (բացառությամբ պատվավոր անդամի) և հոգ տանել Կազմակերպության բարի հեղինակի մասին:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

19.1 ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում, ինչպես նաև քվեարկել Ժողովում՝ III բաժնում սահմանված սահմանափակումներով (այդ իրավունքներն ունեն բացառապես գործող անդամները),

19.2 ներկա գտնվել Ժողովին և Խորհրդի նիստերին անձամբ կամ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում՝ պատվիրակի միջոցով,

19.3 Կազմակերպության կանոնադրությամբ և կառավարման մարմինների որոշումներով սահմանված դեպքերում և կարգով օգտվել Կազմակերպության ծառայություններից,

Էջ 5 ընդհանուր 13-ից

19.4 ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,

19.5 վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,

19.6 Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,

19.7 իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

20. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

20.1 կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

20.2 բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

20.3 սահմանված կարգով և ժամկետներում վճարել անդամավճարը,

20.4 տեղեկացնել Կազմակերպությանը շահերի բախման առկայության մասին սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

21. Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

22. Ժողովի մասնակիցը, Խորհրդի անդամը և Նախագահը իրավունք չունեն մասնակցելու այնպիսի հարցի քվեարկությանը, որը վերաբերում է իր կամ իր հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերին: Նման շահի առկայության մասին անձը պարտավոր է նախապես տեղեկացնել համապատասխան մարմնին, ինչը գրանցվում է արձանագրության մեջ:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

23. Կազմակերպության կառավարման մարմիններն են Ժողովը՝ բարձրագույն մարմինը, Խորհուրդը՝ կոլեգիալ կառավարման մարմինը, և գործադիր մարմինը՝ Նախագահը: Կազմակերպությունն ունի նաև ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողություն իրականացնող մարմին՝ Վերստուգիչ:

24. Ժողովն ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:

25. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով

Էջ 6 ընդհանուր 13-ից

հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 5 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:

26. Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Նախագահի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:
27. Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:
28. Կազմակերպության գործող անդամների թիվը 50-ը գերազանցելու դեպքում Ժողովին մասնակցում են անդամների կողմից ընտրված պատվիրակներ՝ յուրաքանչյուր հինգ գործող անդամից մեկ պատվիրակ հաշվարկով: Պատվիրակների ընտրության կարգը սահմանում է Խորհուրդը: Ժողովը կարող է անցկացվել նաև հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, ինչպես նաև քվեարկությունը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով՝ քվեարկողի ինքնությունը հավաստելու պայմանով:
29. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝
    29.1 Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
    29.2 Այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,
    29.3 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,
    29.4 Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,
    29.5 Կազմակերպության Նախագահի, Խորհրդի անդամների և Վերստուգչի ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
    29.6 Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,
    29.7 Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,
    29.8 Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև Վերստուգչի եզրակացության հաստատումը՝ տարին մեկ անգամ,
    29.9 Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,
    29.10 Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

Էջ 7 ընդհանուր 13-ից

29.11 Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

29.12 օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

30. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Կազմակերպության անդամը, ով հեռակա կարգով մասնակցում է Ժողովին՝ օգտագործելով կապի միջոցները, կամ մասնակցում է էլեկտրոնային քվեարկությանը, համարվում է Ժողովի մասնակից և հաշվի է առնվում քվորումը հաշվարկելիս: Ժողովի որոշումներն ընդունվում են Կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները և հաշվետվությունները պահպանվում են 5 տարի:

31. Խորհուրդը Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինն է, որը կազմված է 3-ից 5 անդամից և ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում է Նախագահը: Խորհրդի անդամ կարող է լինել միայն Կազմակերպության գործող անդամը: Վերստուգիչը չի կարող լինել Խորհրդի անդամ: Մինչև Խորհրդի ընտրությունը նրա լիազորություններն իրականացնում է Ժողովը՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

32. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ Նախագահի կամ Խորհրդի առնվազն երկու անդամի նախաձեռնությամբ: Խորհուրդն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում որոշիչ է Նախագահի ձայնը (բացառությամբ սույն բաժնի 33-րդ կետի 33.9 ենթակետով նախատեսված հարցի): Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ: Խորհրդի նիստերն արձանագրվում են, արձանագրությունները պահպանվում են հինգ տարի:

33. «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

33.1 Կազմակերպության տարեկան բյուջեի և ծախսերի նախահաշվի հաստատումը,

33.2 անդամավճարների չափի, վճարման կարգի և ժամկետների սահմանումը,

33.3 անդամության մեջ ընդունելը և անդամությունից հեռացնելը, անդամների հաշվառման կարգի հաստատումը,

33.4 սույն կանոնադրությամբ Նախագահի համար սահմանված չափը գերազանցող գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,

33.5 մրցաշարերի, լիգայի, մարզական ճամբարների և այլ միջոցառումների կանոնակարգերի, ինչպես նաև Կազմակերպության ներքին քաղաքականությունների հաստատումը,

33.6 Նախագահի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարողի նշանակումը,

33.7 պատվիրակների ընտրության կարգի սահմանումը,

33.8 Կազմակերպության խորհրդանիշի նկարագրության հաստատումը,

Էջ 8 ընդհանուր 13-ից

33.9 Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը: Նախագահը չի մասնակցում իր վարձատրության հարցի քվեարկությանը (այդ թվում՝ որպես Խորհրդի անդամ), և նրա որոշիչ ձայնի իրավունքը այդ հարցի նկատմամբ չի կիրառվում,

33.10 սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

34. Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված և օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սահմանափակումներին ենթակա հարցերը Խորհրդին չեն փոխանցվում:

35. Նախագահն ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Նախագահը և Խորհրդի անդամը չեն կարող պաշտոնավարել ավելի քան երկու ժամկետ անընդմեջ: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

36. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեության ապահովման հետ կապված բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը և Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:

37. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

37.1 ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,

37.2 սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և չափով տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, Կազմակերպության անունից ինքնուրույն կնքում է գործարքներ՝ մեկ գործարքի մասով մինչև 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ և մեկ օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ մինչև 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով. նշված չափերը գերազանցող գործարքները կնքվում են Խորհրդի որոշման հիման վրա,

37.3 ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

37.4 տալիս է լիազորագրեր,

37.5 բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

37.6 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

37.7 հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և Խորհրդի հաստատած բյուջեի շրջանակներում կազմակերպում է Կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործումը,

37.8 հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

37.9 ապահովում է Կազմակերպության և նրա մարմինների հաշվետվությունների կազմումը և ներկայացումը,

Էջ 9 ընդհանուր 13-ից

37.10 կազմում է Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները և դրանք ամեն տարի ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

37.11 ապահովում է Կազմակերպության անդամների և կամավորների հաշվառման վարումը,

37.12 իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

38. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

39. Նախագահի ժամանակավոր բացակայության կամ իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա պարտականությունները կատարում է Խորհրդի որոշմամբ նշանակված Խորհրդի անդամը, որն այդ ժամանակահատվածում առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից_Նախագահի համար սույն կանոնադրությամբ սահմանված սահմաններում: Նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում Ժողովը հրավիրվում է 30 օրվա ընթացքում նոր Նախագահ ընտրելու համար:

40. Վերստուգիչն ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամկետով և չի կարող լինել Խորհրդի անդամ, Նախագահ կամ Կազմակերպության աշխատակից: Վերստուգիչը ստուգում է Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը, անդամավճարների և այլ մուտքերի հաշվառման ճշտությունը և տարեկան եզրակացություն է ներկայացնում Ժողովին: Վերստուգիչն իրավունք ունի ծանոթանալու Կազմակերպության ցանկացած փաստաթղթի, իսկ Նախագահը և Խորհուրդը պարտավոր են տրամադրել պահանջվող տեղեկությունները:

41. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու կամ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու առաջարկը Ժողովի քննարկմանն է ներկայացնում Խորհուրդը, Նախագահը կամ Կազմակերպության գործող անդամների առնվազն մեկ երրորդը: Առաջարկվող փոփոխությունների տեքստը անդամներին տրամադրվում է Ժողովի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ: Փոփոխություններն ու լրացումներն ընդունվում են Ժողովին ներկա անդամների ձայների առնվազն 2/3-ով և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Փոփոխությունների պետական գրանցման համար դիմումը ներկայացնում է Նախագահը:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

42. Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

43. Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն և անգլերեն անվանումներով կլոր կնիք՝ խորհրդանիշով, կարող է ունենալ դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով:

44. Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

44.1 իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,

Էջ 10 ընդհանուր 13-ից

44.2 բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,
44.3 ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակից,
44.4 ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,
44.5 տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
44.6 կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,
44.7 օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,
44.8 համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միավորում կամ անդամակցել նրանց ստեղծած միավորմանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,
44.9 իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից,
44.10 եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել օրենքով նախատեսված հանրային միջոցները, հրապարակելու հաշվետվությունների համար նախատեսված կայքում ինչպես օրենքով նախատեսված հաշվետվությունը, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի վերաբերյալ տեղեկություններ կամ նյութեր: Կազմակերպության հաշվետվությունը պահպանվում է հինգ տարուց ոչ պակաս ժամկետով,
44.11 կատարել օրենքով չարգելված այլ գործողություններ:

45. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

46. Կազմակերպությունը պարտավոր է՝
46.1 վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,
46.2 եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է տասը միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության Ժողովի ընտրած անկախ աուդիտորի կողմից,
46.3 պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը,

Էջ 11 ընդհանուր 13-ից

46.4 «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,

46.5 Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերին, Ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Սույն ենթակետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,

46.6 Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,

46.7 իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ամեն տարի ներկայացնել Կազմակերպության Ժողովի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,

46.8 եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել օրենքով նախատեսված հաշվետվությունը,

46.9 եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել օրենքով նախատեսված հանրային միջոցները, Կազմակերպությունն իրավունք ունի կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակելու ինչպես օրենքով նախատեսված հաշվետվությունը, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի վերաբերյալ տեղեկություններ կամ նյութեր (հաշվետվությունը պահպանվում է հինգ տարուց ոչ պակաս ժամկետով),

46.10 կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

47. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

48. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

49. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

Էջ 12 ընդհանուր 13-ից

49.1 Կազմակերպության անդամների ներդրումները,
49.2 անդամավճարները,
49.3 Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
49.4 իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,
49.5 դրամական մուտքերը պետական բյուջեից,
49.6 նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
49.7 հաշվառանակությունները,
49.8 օրենքով չարգելված այլ միջոցներ:

50. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը, նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

51. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) և լուծարումը կարող է իրականացվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:
52. Կազմակերպության հարկադիր վերակազմակերպումը կամ լուծարումը կարող է կատարվել միայն դատական կարգով:
53. Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունվում է Ժողովի կողմից՝ Ժողովին ներկա անդամների ձայների առնվազն 2/3-ով:
54. Կազմակերպության գործունեությունը համարվում է ավարտված, իսկ Կազմակերպությունը՝ լուծարված, իրավաբանական անձանց ընդհանուր պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից:
55. Ժողովը կազմավորում (նշանակում) է լուծարման հանձնաժողով (լուծարող) և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Սույն կանոնադրությունը կազմված է «16» հոկտեմբերի 2026 թ:

Էջ 13 ընդհանուր 13-ից